

338.63

2-14

1931 թ. ԳԱՐՆԱՆ ՑԱՆՔԵՐԻ
ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ

1931

ՅԵՐԵՎԱՆ

1931 թ. ԳԱՐՆԱՆ ՑԱՆՔԵՐԻ ԿՈՆՏՐԱԿ- ՑԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ԿՈՆՏՐԱԿՏԱՆ, ԽՈՐՀՐԵՑԻՆ, ՑՆՑԵՍՏԱՆ, ԿՈՐԳԵՐԱՅԻՎ, ԿՈՐ-
ՑՆՑԵՍՏԱՆ ՅԵՎ ԿՈՐԳԵՐԻՑԱՆ ԲՈՂՈՐ ԿԵՐՄԵՆԲԵՐԴՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻՆ

Հնգամյա պլանի անցյալ յերկու տարվա ա-
ռաջադրանքների ղերակատարումը, մանավանդ
ծանր ինդուստրիալի և գյուղատնտեսական մե-
քենաշինության ասպարիզում, հնարավորություն
և տալիս խորհրդային իշխանությանը հնգամ-
յակի յերրորդ տարում ել ավելի մեծացնելու
գյուղատնտեսության ներդրումները՝ նախորդ տա-
րիների համեմատությամբ և ալգոլիսով ուժեղաց-
նելու այն ոգնությունը, վոր ցույց է տալիս պե-
տությունը գյուղին չքավոր և միջակ տնտեսու-
թյունները կոլեկտիվացնելու, կուլակությունը,
վորպես դասակարգ, վերացնելու բնագավառում:

Դրա համեմատ և նկատի ունենալով գալ-
նան ցանքերի կոնտրակտացիայի առաջիկա կամ-
պանիան, ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների
Խորհուրդը և Համկոմկուսի Կենտրոնական Կո-
միտեն անհրաժեշտ են համարում կիրառել հե-
տևյալ ձևերնորությունները.

Հրատ. № 164:

Դրաստվար № 6294 (բ)

Պատվեր № 1804

Տեղամ 10.000

I. ՊԵՏԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՑՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. 1931 թ. ընթացքում գյուղատնտեսությանը հատկացնել 120 հազար տրակտոր (հաշված տաս ուժանոց տրակտորներով) 200 միլիոն ռուբլու ընդհանուր արժեքով:

2. Բացի գոյություն ունեցող 360 մեքենատրակտորային կայանից 1931 թ. կազմակերպել 1040 նոր մեքենատրակտորային կայան 980 հազար ձիու ուժով, այն հաշվով, վորպեսզի 1931 թ. գարնանն աշխատի 1105 մեքենատրակտորային կայան 692 հազար ձիու ուժ ունեցող տրակտորներով, վորոնք ապահովեն 1931 թ. 18 միլիոն հեկտար ցանքը անցյալ տարվա 4 միլիոն հեկտարի փոխարեն: Մեքենատրակտորային կայանների հիմնական շինարարությունը 1931 թվականին հատկացնել 540 միլիոն ռուբլի:

3. 1931 թվականի գյուղատնտեսությունը գյուղատնտեսական մեքենաներ հայթայթել 1930 թ. համեմատությամբ կրկնակի չափով (400 միլիոն ռուբլու փոխարեն հատկացնել 760 միլիոն ռուբլի, վորից 57 միլիոն ռուբլի՝ բերքահավաքի մեքենաների համար): Այդ մեքենաների հիմնական մասը ուղարկել կոլտնտեսությունները և մեքենատրակտորային կայանները սահմանված պե-

տական եժան գնով: Մինչև դարուն գյուղատնտեսությունը տալ 370 միլիոն ռուբլու մեքենա:

4. Գյուղատնտեսությունը հատկացնել 7000 բեռնատար և թեթև ավտոմոբիլ, վորից առնվազն 2000-ը տալ մեքենատրակտորային կայաններին:

5. 1931 թ. գյուղատնտեսությունը մատակարարել 24 միլիոն ցենտներ (147 միլիոն փուլ) հանքային պարարտանյութ, 105 միլիոն ռուբլու արժողությամբ, վորից 13 միլիոն ցենտները (78 միլիոն փուլ) մինչև դարուն:

6. Գյուղատնտեսությունը մինչև սեզոնը հատկացնել ֆաբրիկաների դեմ պալքարելու համար 40 միլիոն ռուբլի արժողությամբ գործիքներ և նյութեր, անցյալ տարվա 19 միլիոն ռուբլու փոխարեն:

7. Կոլտնտեսությունների բերքատվությունն ավելացնելու նպատակով բաց թողնել 21 միլիոն ցենտներ (126 միլիոն փուլ) տեսակավոր և ազնվացրած սերմացու, վորից

11.500.000 ցենտներ հացահատիկ,

1.600.000 ցենտներ լեզիպտացորեն,

500.000 ցենտներ արևածաղկի սերմ,

1.100.000 ցենտներ բակլայբուլսերի սերմացու,

250.000 ցենտներ սոյա,

430.000 ցենտներ շաքարի. ճակնդեղի սերմ,

120.000 ցենտներ ձիթատու վռնի սերմ:

760.000 ցենտներ թեյատու » »

310.000 ցենտներ կանեփի » »

2.500.000 ցենտներ սերմացու կարտոֆիլ:

1.600.000 ցենտներ բամբակի հունդ,

1.330.000 ցենտներ այլ սերմացու:

4,1 միլիոն ցենտներ տեսակավոր սերմացու հացահատիկի ֆոնդը կազմել պետական ֆոնդից և 2,4 միլիոն ցենտներ ապրանքային-տեսակավոր հացահատիկի ֆոնդ՝ կենտրոնացած մթերումներից:

Պետական հացահատիկային տեսակավոր սերմացվի ֆոնդի ընդհանուր քանակից (11.500 հազար ցենտներ) բաց թողնել շարքացանի համար 10 900.000 ցենտներ փոխանակման կարգով և առանց փոխանակման՝ 600—800 հազար ցենտներ սերմացու կոնտրակտացիայի կարգով աշխանք վերադարձնելու պայմանով: Ցանողներին սերմացու բաց թողնելիս տեսակավոր և բարելավված սերմացվի մթերման գների վրա կատարվելիք հավելումը չպետք է գերազանցի 15 տոկոսից:

8. Առաջարկվում է Ձերնոտրեստի խորհանտեսութլուններին ոգնութլուն ցույց տալ կոտնտեսութլուններին, գարնանը վարելով իրանց համար առնվազն 500 հազար հեկտար և ցաւելով առնվազն 500 հազար հեկտար:

Ուժեղացնել խորհանտեսութլունների կողմից կոտնտեսութլուններին ցույց տրվող ոգնութլան մյուս բոլոր ձևերը (ազրոտգնութլուն, գլուղատնտեսական մեքենաների ոգնադործում ու նորոգում, կադրերի պատրաստում և այլն):

9. Բյուջեի կարգով և յերկարատե վարկով կոտնտեսութլուններին ու մե, ենա-տրակտորային կայաններին բաց թողնել 1.050.000 ուրլի:

10. Բացի վերոհիշյալ ձեռնարկումներից պարտավորեցնել Պետքանկին բաց թողնել 335 միլ. ուրլի իրենց դաշտագործութլան արդյունքները կոնտրակտացիայի յենթարկող ցանքարարներին դրամով ավանս տալու նպատակով՝ բոլոր կուտուրաների համար (թե ապրանքային և թե սերմացու):

Այդ դումարի հիմնական մասը պետք է տրվի հողի մշակման շրջանում և մինչև բերքահավարը: Այս բոլոր ներդրումները պետք է տեխնիկապես հսկայական չափով բարձրացնեն ծավալող կոտնտեսական շարժման նյութական բազան և դրանով իսկ ավելացնեն յերկրի հումքային և պարենային միջոցները: Նպատակ ունենալով այս հիման վրա արմատապես բարելավել արտագրութլունը հումք հայթալթելու և աշխատավորութլանը պարենավորելու գործը, պարտավորեցնել ԽՍՀՄ Մատոողկոմատին և Հողմողկոմատին

գյուղատնտեսական կոոպերացիայի, կոլտնտկենտ-
րոնի, Տրակտորկենտրոնի և Սերմաբուծական
կոլտնտկենտրոնի միջոցով 1931 թ. զարնան ցան-
քերը կոոպերացիայի լենթարկել հետևյալ հի-
մունքներով:

II. ՀԱՅԸՆԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՉԻԹԱՐՈՒՅՄԵՐԻ ԱՍՊԱՐԱԶՈՒՄ

1. Կոլտնտեսություններում և անհատական
չքավոր ու միջակ տնտեսություններում հացա-
հատիկների ու ձիթաբույսերի կոնտրակտացիայի
պլանը սահմանել 58 միլիոն հեկտար, վրից 10, Երե-
ցենտրի միջոցով կոնտրակտացիայի լենթարկել
39.500.000 հեկտար, Տրակտորկենտրոնի միջո-
ցով 15.500.000 հեկտար, Սերմաբուծական կոլ-
տնտկենտրոնի միջոցով՝ 3.000.000 հեկտար (տե-
սակավոր սերմերի ցանքեր՝ տեսակավոր սերմեր
ստանալու նպատակով):

Ըստ մշակույթների կոնտրակտացիայի յեն-
թարկել՝ հացահատիկ 51 միլիոն հեկտար, արևա-
ծաղկի սերմ՝ 4 միլիոն 430 հազար հեկ., սոյա՝ 400
հազար հեկտար, բակլային բույսերի սերմ՝ 2 մի-
լիոն հեկտար և բրինձ՝ 170 հազար հեկտար:

2. Բացի հատկացվող մեքենաներից և ար-
տադրական վաբկերից մշակույթների համար ա-
վանտ տալու նպատակով բաց թողնել 40 միլիոն
ռուբլի, վորից արևածաղկի սերմի համար՝ 9 միլի-

ռուբլի, յեգիպտացորենի համար՝ 10 միլիոն ռուբ-
լի, սոյայի համար՝ 6 միլիոն ռուբլի, այլ բակ-
լաբույսերի համար՝ 9 միլիոն ռուբլի և բրինձի
համար՝ 6 միլիոն ռուբլի: Ավանտները տալ բուկը
լցնելուց և քաղհանելուց առաջ:

Արևածաղկի սերմը և սոյան միթերելիս հանձ-
նված ամեն մի ցենտներ արևածաղկի սերմի և
սոյայի դիմաց կոլտնտեսության անդամներին
տալ կանխիկ վճարով 4-ական կիլոգրամ ձեթ և
8-ական կիլոգրամ քուսպ և անհատական չքա-
վոր ու միջակ տնտեսություններին՝ 3-ական
կիլոգրամ ձեթ և 6-ական կիլոգրամ քուսպ:

III. ԲԱՄԲԱԿԱՐԹՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԱԶՈՒՄ

1. 1931 թ. կոլսնեստություններում յեվ տն-
հասական չփավոր ու միջակ սնեստություններում
կոնսրակցացիայի յենթարկել բամբակի ամբողջ
բերք՝ 19 միլիոն ցենսներ:

2. 1391 թ. բացի բամբակագործական շր-
ջաններում գոյություն ունեցող 19 մեքենա-
սրակսորային կայաններից, կազմակերպել 130
մեքենա-սրակսորային կայան, 125 հազար ձիու
ուժի սրակսորներով. դրանցից սինչեվ գարուն
պեսե Ե կազմակերպվի 118 մեքենա-սրակսորա-
յին կայան, վորոնք պեսե Ե մեակեն 1.200 հա-
զար հեկտար բամբակ:

3. Բամբակագործական օրջանները դառնալիս աշխատանքների ժամանակ ուղարկել 48 հազար բամբակացան մեխենա, վորից 11 հազարը պեժ Ե լինի ֆառաւար յեժ յերկւար, 55 հազար կուլիվասոր, վորից 20 հազարը սրակտրներին կցվող, 23 հազարը բուլը լցնող յեժ հազար հաս բամբակ հաժաֆող մեխենա:

4. 1931 թ. բամբակագործական կոլսնեստրյուններին յ'ժ անհասական չափոր ու միջակ բամբակագործական սնեստրյուններին պէտական Եժան գներով բաց բողներ 8 միլիոն 200 հազար ցենսներ (50 միլիոն փութ) հոցահասիկ յեժ 1.640 հազար ցենսներ (10 միլիոն փութ) անասունի կեր: Յաւրաֆանցյուր սնեստրյունը սրվելիք հոցի նորման խոսիվ կախված պեժ Ե լինի բամբակի դառնեսի մաակման վարակից յեժ պէտրյաւը հանձնված բամբակի ֆանակից:

5. Բամբակագործական սնեստրյուններին վան ու լա հաժաւ 1930 թ. բամբակագործական օրջաններն ուղարկել տոնվալն 250 միլիոն ուրբուտ սոդյունաքերական ապրանք, այն հաժվով, վոր ապրանքը բամբակագործական սնեստրյուններին վանառվի նորմալ ապրանքաօրջանառոթյան կարգով՝ սանձանված պէտական Եժան գներով:

6. Բամբակացաններին վարկաժորել Ե նպասակով բաց բողներ 100 միլիոն ուր լա վորի 20 տկաւը վնարել ցանկից առաջ, 30 տկաւը՝ առաջին ֆաղհանից առաջ յեժ 50 տկաւը՝ 3-րդ ֆաղհանից առաջ: 3-րդ ֆաղհանից առաջ վնասը վնարել միմիայն այն դեպքում, յերկ կասարված Ե առաջին յեժ յերկուրդ ֆաղհանը:

7. Բամբակացաններին բաց բողներ անտկոս վարկով 1.800 հազար ցենսներ հանալին պարաւս նյութ, գանձելով պարաւսանյութի արժեքը սանձանված ժակեսներին:

8. Բամբակացաններին կոնսրակացիայի կարգով սերմացու սալ այնպիսի ֆանակով, վոր ծածկի նրանց ամբողջ պահանջը (1 600 հազար ցենսներ):

IV. ՀԱՆԿԵՂԻ ՆԵՒ ՎՈՅԻ ԸՍՏԱՐԵՂՈՒՄ

1. Կոլսնեստրյուններում յեժ չափոր ու միջակ անհասական սնեստրյուններում կոնսրակացիայի յենրարկել շաֆարի հակնդելի ամբողջ յերբը՝ 1.200 հազար նեկսար:

2. *Ճակնդեղացան շրջաններում կազմակերպել 150 մեքենա տրակտորային կայան, վորից 120-ը մինչև գորուն: Վերջինները պետք Ե ընդգրկեն 375 հազար հեկտար ճակնդեղի ցանք:*

3. Շաքարի ճակնդեղ ցանողների համար ճակնդեղաքան շրջաններն ուղարկել 60 միլիոն ուրբու աղյուսաբերական ապրանք այն հաշվով, վոր այդ ապրանքը ճակնդեղաքան հանձնարարություններին վանալի նորմալ ապրանքա-երջանատուքյան կարգով, սահմանված պեսա-կան եժան գներով:

4. 1931 թ. պահպանել ապրանքայնության անցյալ տարվա նորմաները, այն է՝ հանձնված ամեն մի ցենտներ ճակնդեղի համար տալ ձրի 58 կգ. քուսալ և 1.05 կգ. պատուկա, իսկ հանձնը-վող ճակնդեղի հաշվին՝ 60 գրամ շաքար (յուրա-քանչյուր ցենտների դիմաց):

5. Ճակնդեղ ցանողներին ալանա տալու նպատակով բաց թողնել 41 միլիոն ուրբի այն հաշվով, վորպեսզի բացի արդեն արված 25 տոկոս ալանայից 50 տոկոսը արվի քաղհանի ժամանակ և 25 տոկոսը բերքահավաքի ժամա-նակ:

6. Ճակնդեղաքան կոլտնտեսություններին և անհատական չբավոր ու միջակ անտեսություն-ներին անտոկոս վարկով տալ 2 ցենտներ հա-նքա ին պարարտանյութ (սուպերֆոսֆատ) յու-րաքանչյուր հեկտարին, դանելով պարարտա-նյութի արժեքը սահմանված ժամկետներին: Յու-րաքանչյուր հեկտար ճակնդեղի ցանքի դիմաց ձրի տալ 32 կգ. ճակնդեղի սերմ:

Վուշ և կանեփ ցանող կոլտնտեսություննե-րում և չբավոր ու միջակ անհատական անտե-սություններում կոնտրակտացիայի լինթարկել՝ 1.980 հազար հեկտար թեյատու վո ի և նրա սերմացվի ց-նքը, 400 հազար հեկտար ձի-թատու վուշի և նրա սերմացվի ցանքը, 700 հազ. հեկտար կանեփի և նրա սերմացվի ցանքը:

Վո շաքան շրջաններում 1931 թ. կազմա-կերպել 150 մեքենա-տրակտորային կայան 75 հազար ձիու ուժի տրակտորով այն հաշվով, վոր մինչև դարուն կազմակերպված լինի 77 մեքենա-տրակտորային կայան՝ 38 հազար 500 ձիու ուժի տրակտորով, և հերթի 230 հազար հեկտար հող՝ վուշի ց-նքի համար:

Բացի վուշը նախնական մշակման յեկ-թարկվող 38 գործարաններից 1931 թ. կառուցել 480 նոր գործարան, վորոնք պես և սպասար-կեն բոլոր վուշագործական խորհանսեսություն-ներն ու մեքենա-տրակտորային կայանները յեվ այն կետեր, վորտեղ նախագծված է 1932 թ. կառուցել մեքենա-տրակտորային կայաններ:

Չնայած 1930 թ. կոլտնտեսության զար-գացման արդյունքները դեռ չեն ամփոփված, բաց հիմնվելով բամբակի բերքի տվյալների վրա, կարելի չե արձանագրել, վոր ընթացիկ տարում սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռն

ավելի բարձր է, քան անցյալ տարիները միասին վերցրած: Բայց և այժմ պետք է ասել, վոր թե անհատական և թե գյուղատնտեսական սոցիալիստական սեկտորի բամբակի ցանքերի ընդարձակումը չի կարող թագցնել այն անհաջողությունները, վորոնք նկատվում են բերքաավությն և ասպարիզում:

Ցուցանիշ

	Աղբեր- ջան	Հայաս- տան	Վրաս- տան	Ընդա- մենը ԱՍՖԽՀ
1923—24 թ.	6,2	6,5	4,3	6,0
1924—25 » . .	5,9	7,6	4,8	6,6
1925—26 » . .	6,0	9,2	4,8	6,3
1926—27 » . .	6,2	6,7	3,7	6,2
1927—28 » . .	6,3	10,8	7,1	6,7
1928—29 » . .	5,1	7,9	3,9	5,3
1929—30 » . .	4,2	6,2	3,2	4,3

Այսպիսով 1924—25 թ. սկսած մենք ունենք բերքաավության նվազում, հաշվի չառնելով 1927—28 թ.: Այստեղից բխում է բամբակի հումքի տարեկան նվազումը:

Յեթե 1925 թ. Անդրկովկասում հավաքված

է 74,1 հազար տոնն բամբակ, 1929 թ. այդ գու-
մարը իջավ մինչև 56,3 հազար տոննի: Յերբայս
տողի բերքը գրվում էյին (1931 թ. հունվարին), 1930
թ. բամբակի բերքահավաքը դեռ չէր վերջացել,
բայց կարելի է ասել, վոր դնած ապրանքային
բամբակը անցյալ տարվա բերքից քիչ կգերա-
զանի: Հնալած վոր ընթացիկ տարում բամբակի
ցանքերն ավելացան: Խորհրդային կառավարու-
թյունը միջոցներ է ձեռք առնում ջրվող տարա-
ծություններն ավելացնելու միջոցով և բերքա-
ավությունը բարձրացնելով՝ ընդարձակելու բամ-
բակագործությունը: Յուրաքանչյուր տարի բաց
է թողնվում վարկեր ջրաբաշխական մեծ ու վոքր
շինարարությունների: Նոր հողերի տնտեսական
ոգտագործման, շահագործվող մեթոդների ու-
ցիոնալիզացիայի և բարելավման համար: Բամ-
բակացաններին բաց են թողնվում զանազան
տեսակի պարարտանյութեր, բնակչության մեջ
տարածվում են գյուղատնտեսական տարրական
գիտելիքներ, բամբակագործ կան բնագավառը շա-
րունակ լրացվում է բարձր, միջին ու ստորին ագրո-
կուլտի նորանոր կադրերով, տեղի լեն ունենում սիս-
տեմատիկ նորագություններ, Անդրկովկասում գո-
լություն ունեցող ջրաբաշխական սիստեմները
լայնացվում են: Սերմի ազնվացման համար բա-
վական աշխատանք է կատարվում:

Այժմ բամբակի ամբողջ ցանքը կատարվում է տեղական սերմացու հնդով: Այնուամենայնիվ, չնայած այդ բոլոր միջոցներին, բամբակի անկախությունը հնգամյակով նախատեսված բամբակի հողերի մի զգալի մասը մնում է չցանված: Վորոնք են և վնասող են թագնված պլանների թերակատարման պատճառները. և ի՞նչ պետք է անել, վոր Անդրկովկասը դառնա Խորհրդային Միության յերկրորդ բազան և հնգամյակի վերջում բամբակի ցանքերը միմիայն Ադրբեջանում հասնեն 500 հազար հեկտարի:

ԲԱՄԲԱԿԱՆԱՐԹՈՒԹՅՈՒՆ ՁԱՐԿՈՒՄԸ ԻՆԴՈՎԿԱՍԻԱՆՈՒՄ ԻՆՉՆ Ե ԿԱՍՑՆԱՐՄ ՅԵՎ ՎԻԺՆՆԱՐՄ

Բամբակի ֆրոնտում անցյալում և ներկայում տեղի ունեցած ճեղքվածքների հիմնական պատճառն այն է, վոր Անդրկովկասի կուսակցական և խորհրդային կազմակերպությունները դեռ չեն գիտակցել և չեն գնահատել բամբակագործության նշանակությունը, վորպես Անդրկովկասի ամբողջ գյուղատնտեսության ղեկավարող բնագավառի: Անդրյերկոմի «բամբակամթերման կամպանիայի և գարնան բամբակացանի նախապատրաստման մասին» վորոշման մեջ այդպես էլ մատնանշված է. «Անդրյերկոմը գտնում է, վոր բամբակի ֆրոնտի ճեղքվածքի հիմնական

պատճառը ազգային կոմկուսակցությունների կենտրոնական կոմիտեների և տեղական կուսակցական կերպովությունների բայջիկյան ղեկավարության բացակայությունն է ցանքերի նախապատրաստական աշխատանքների, բամբակի մշակման, ին պես նաև բամբակի մթերման ասպարիզում: Չնայած Համկոմկուսի կենտրոնական Կոմիտեյի 1929 թ. հուլիսի 18-ի վորոշմանը, Անդրկովկասում բամբակագործությանը վերաբերվեցին վոչ վորպես առաջնակարգ և զլխավոր տնտեսա-քաղաքական կամպանիայի: Բոլոր կազմակերպությունները, սկսած կենտրոնականներից և վերջացրած ստորիններով, համակված ելին այդ հանգստությունը և անհոգությունը:

Բամբակագործական կոոպերացիայի և մյուս կազմակերպությունների աշխատանքի մեջ յեղած աջ-ոպորտունիստական պրակտիկան, յեռանդուն միջնորդությունները պլանների պակասեցման, կրճատման մասին, վորոնք իբր թե չեն բղխում իրականությունից, դասակարգա ին քաղաքականությունն աղավաղումը գյուղում, կուլակության թերազնահատությունը, իսկ շատ դեպքերում նույնիսկ ուղղակի վիշուսները, ոժանդակությունը, պատժիչ քաղաքականության սխալ կիրառումը կուլակների նկատմամբ, վորոնք դիտավորյալ կերպով վիժեցնում ելին ցանքերի ար-

ապրիլի 1-ին, բամբակը չեղին հանձնում, նրանց անարգելը և անպատիվ կերպով չքալորների և միջակների շարքը դասելը, բամբակագործության ընդարձակման բացարձակ թշնամիները, վորոնք նկատվում ելին միջանի պատասխանատու աշխատավորների շարքերում, այս բոլորը հասցրին այն կետին, վոր 1930 թ. Անդրկովկա ը բամ, ակի պլանը կատարեց հաղիվ կիսով չափ: Մեզ մոտ միջանի տարի շա ունակ անպատիվ կերպով զանազան խոսակցություններ են յեղել տրակտորների, գութանների և ուրիշ մեքենայացրած գյուղատնտեսական ինվենտարի վնասակարության կամ, համեմալն գեպս, անոգուտ լինելու մասին բամբակագործության համար:

Միմիալն վերջին ժամանակները գյուղատնտեսական նահապետական ձևերի կողմնակիցներն ու պաշտպանները տեսան և զգացին խոշոր հողային տնտեսությունների, կոլտնտեսությունների, խորհանտեսությունների բոլոր առավելո թյունները, նույնպես և գյուղատնտեսական կատարելագործված միջոցների կիրառության տարբերությունը (մեխանիզացիա) մանր, բաժան-բաժան անհատական տնտեսությունների համեմատությամբ:

Համկոմկուսի կենտրոնական Կոմիտեն 1929 թ. հուլիսի 18-ի վորոշման մեջ ջրի հարցի վրա մեծ ուշադրություն դարձրեց: Այս ամենախելացի մոտեցումն ե բամբակի պրոլեմի լուծմանը, վորովհետև բոլոր յերիք տարրերից՝ ջրից, հողից և բանվորական ուժից, վորոնք ապահովում են բամբակագործության հաջողությունները, ջուրն ե, վոր մեր սրայմաններում հանգիստնում ե ամենավճռական և հզոր գործոնը:

Ջրային տնտեսության որդանները միջանի տարվա ընթացքում ինչպես են աշխատել և ինչպես են կատարել իրենց ֆունկցիաները:

Պատասխանը պատասա ե: Վերցնենք այն ջրվանը, վոր ընկնում ե Համկոմկուսի (բ) կենտրոնական Կոմիտեի բամբակի վերաբերյալ պատմական վորոշումից հետո, վորը պարտավորեցնում ե ամենալուրջ կերպով և անմիջապես զբաղվել վորոգման գործով:

Անդրյերկամի 1930 թ. դեկտեմբերի 22-ի վորոշումը վերջնական պարզ պատասխան ե տալիս վերեը դրված հարցին:

«Անդրջրտնտեսության և հանրապետական ջրտնտեսությունների կողմից բացակայել ե բամբակը ջրելու համար վորոգման սխառնների

նախադարձութեան աշխատանքների ժամանակին կազմակերպումը և ջրի ռացիոնալ ոգտագործումը մանավանդ ամառը, առաջին հերթին բամբակի համար», — ասում է Անդրյերկոմի վորոշումը: Նույն վորոշման մյուս կետերում նըշվում է.

«Ձուրը ժամանակին չհասցնելու հետևանքով դաշտերը չորացան: Ձրային սիստեմի դեկավարության կազմակերպությունը, նույնպես և ջրհանների վերանորոգությունն ու գոյութիւն ունեցող սիստեմների ոգտագործումն ամբողջովին թողնված էյին ինքնահրսի և ջրբաժանների ու միրաբների բարեհայեցողությանը, առանց վերջինների կազմի ստուգման կուսակցական և խորհրդային կազմակերպությունների կողմից: Իրա հետ միասին բացակայում էր ջրանտեսությունների դեկավարությունը տեղական ջրաբաշխական սիստեմների լավացման, նույնպես և ջրհանային տնտեսության կանոնավոր ոգտագործման ու նորոգության գործում»:

Այս բոլորին պետք է ավելացնել և այն, վոր միչև այժմ ջրային ռեսուրսների շահագործման մեթոդները կիրառելիս, մանավանդ Մուղանում (Ադրբեջան), հաջող կերպով և ռացիոնալ ոգտագործվել է ջրի միմիայն մեկ լերըորդ մասը: Իսկ ջրի մնացած քանակութիւնը մեզ հա-

մար կորած և, վորպես մի ավելորդ ծախս, վոր արդյունք է վոռոգման սիստեմների անկազմակերպության, ջրաոգտագործման անխնա յեղանակների, այն քառսի և անարխիայի, վորոնք տիրում են ջրաբաշխական սիստեմներում, արդյունք է վոչ միայն ջրանտեսության որդանների, այլ և կուսակցական, խորհրդային և պրոֆմիության ստորին ապարատի անուշադրության այս ասպա իրում:

Այն ժամանակ, յերբ մի շարք շրջաններ ջրի առատության մեջ կորած, մյուսները ջրի պակասութիւնից չորանում են, ջրիլու պլանի, դիսքիպլինայի ու հերթի բացակայութիւնը, ջրելու որոցուլցային ժամկետների բացակայութիւնը, դիպի ջրհան մեքենաները, բյահրիզներն ու չարխերը ցուլց տրվող անփութ ու անտնտես վերարհմունքը, վորոշ տեղերում ամբողջման աշխատանքների վիժեցումը, նախաձեռնության բացակայութիւնը գլուղական մասսաներին ջրորնտեսության աշխատանքների ապարիզում գրավելու գործում, վճռական միջոցների ձեռք չառնելը բամբակի համար նշանակված, բուլց հացահատիկ ցանած դաշտերի վոռոգումը դադարեցնելու համար, — այս բոլորն անա տեղի չե ունեցել և այժմ ել տեղի ունի, յերբ ջրիլուրաքանչլուր խորանարդ մետրը բամբակի ցանքերին

հատկացնելու դեպքում մեզ արագ տեմպով մոտեցնում և ծրագրված նպատակին, բամբակի անկախությանը: 1931 թ. պետք է հանդիսանա արտասահմանից բամբակի ներմուծումը դադարեցնելու անդրանիկ տարին:

Բամբակագործության պլանների ու ղեկավարող որդանների գիրեկիվների կատարումը միայն մեզ հնարավորություն կտա հրաժարվելու հուլիսի ներմուծումից: Դրա համար ել կազմված են 1931 թ. գարնան բամբակացանի կամպանիայի բոլոր պլանները:

Սերմանման կամպանիայի մասշտաբները պարտավորեցնում են մեզ լուրջ կերպով զբաղվելու ցանքի նախապատրաստական աշխատանքներով: Սակայն մեր ջրանտեսություններն լուրջորեն են արդյոք անցած տարիների սխալներին ու դասերի: Սկսվող նախապատրաստական կամպանիան դարձյալ ունի մի շարք կազմակերպչական անհաջողություններ: Ջրելու պլանները համարյա բոլոր շրջաններում հիմնավորված չեն և հաճախ միայն լոկ թվեր են, վորոնք չեն համապատասխանում իսկական պլանային առաջադրանքներին: Վորոշ տեղերում ցանքերի աճումը կազմված է ինչպիսիք շնանայանի: Բամբակացան շրջանները անող վոռազման սխառնեքի վերի մասերում գտնվող մշակույթների խո-

նավատարողության կրճատման հարցը առաջմ տեղերում չի քննված և ջրանտեսության որդանները այդ հարցի լուծումը չեն արադացնում:

Ջրբաժանների ու միրաբների սխառնեք վերացնելուց հետո յրանց փոխարեն դեռ չեն նշանակված ջրալիազորներ: Ջրանտեսության կազմակերպությունների ծրագրված առաջադրանքների կատարման աշխատաքի միջից կարմիր թեի պես անցնում են ինքնահոսք, պասիվություն, դանդաղություն ու սառնասիրտ ձևականություններ: Ահա թե ինչո՞ւ, չնայած ջրարաշխական սխառնների վերականգնման և վոռագելի ուր հողեր ձեռք բերելու առաջնորդում ունեցած հաջողություններին, Անդրկովկասի ջրանտեսության րոգհանուր գրությունը շատ անբավարար է: Ջրհանների ու քյահրիլիների ոգնությունը կատարվող վոռագումն ամբողջովին չի վերականգնված:

Ջրհանները մինչպատերազմյան շրջանում վոռագում ելին 25 հազար հեկտար բամբակ, իսկ 1929 թ. միմիայն 20 հազար հեկտար: Հնարավորության սահմաններում անհրաժեշտ է արագացնել ջրհանների վերակազմությունը, վորը մեզ թուղ կտա վոշ միայն ուսցիոնալիզացիայի յենթարկել նրանց շահագործումն, այլ և իջեցնել վոռագման ինքնարժեքը:

Մեծ ուշադրութիւն պետք է դարձնել նաեւ
ճարտարագիտական սխառեմների շահագործման
վրա մանավանդ Մուղանում (Ադրբեջան), վր-
տեղ ջրթափ ցանցի բացակայութեան պատճա-
ռով և ջրի ալյանդակ ու անկանոն բաշխման հե-
տեանքով յուրաքանչյուր հեկտարի ծախսը 5 ան-
գամ մեզ վրա ափսիսի յետնառում, քան Միջին
Ասիայում: Կասկած չկա, վոր Ասդրկովկասի խոր-
հրդայնացման ամբողջ շրջանում ջրանտեսութեան
որգանները կատարել են զգալի աշխատանք: Բայց
ստացված հետեանքները բավական նվազում են
այն մեծ պակասութունների պատճառով, վոր-
ոնք նկատվում են այդ որգանների օպերատիվ
աշխատանքներում:

ՊԵՏԱԿԱՆ ԲԵՐՔԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՋԱՊԵՏՈՒՄ ԵՎ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ

Մեր բերած աղյուսակի մեջ պարզ կերպով
ցուցադրված են բերքատվութեան այն տատա-
նումները, վորոնք նկատվում են Ասդրկովկասում:
Մենք գիտենք, վոր մեր բամբակի ցանքերի ընդար-
ձակման պայքարը պետք է ընթանա վոչ միայն վո-
ռոգվող դաշտերի ընդարձակման, այլև, վոչ պակաս
յեռանդով, նաեւ վոռոգվող դաշտերի անտեսական
ոգտադործման և բերքատվութեան բարձրացման
գծով: Առանց դրան բամբակի պրոբլեմը հաջո-
ղութեամբ չի լուծվի:

Խնչալիսի ցուցանիշներ ունենք բերքատվու-
թեան բնագավառում: Ընթացիկ տարում Ասդր-
կովկասում բերքատվութեանը բավական բարձր
երանցյալ տարի երի համեմատութեամբ և հաշ-
վում է հեկտարին մոտավորապէս 28 փութ:
Վճռականապէս պետք է ասել, վոր յիշած հա-
րավորութունների տեսակետից այդ թիվը բա-
վական փոքր է: Միջին Ասիայում անջրդի տա-
րածութիւնները ափսիսի բարձր բերք են տալիս,
քան մեզ մոտ ջրովիները, այն ժամանակ, իբրեւ
մենք ունենք լավ բերք ստանալու բոլոր նախա-
դրյալները:

Մեր հողը Միջին Ասիայի հողից վատ չէ,
կլիմայական պայմաններն ու աճման որոնքները
համարյա նույնն են, սակայն մեզ մոտ բերքա-
տվութեան վրա քիչ ուշադրութիւն են դարձնում,
մեզ մոտ շարքացանք քիչ են կատարում: Մեզ
մոտ կան մի շարք անհետաձգելի, հասունացած
հարցեր, վորոնք մինչև հիմա լուծված չեն (վորը
նույնպէս ազդում է բերքատվութեան վրա, որի-
նակ քոչի հարցը): Այսպէս, որիեակ, այն բնակ-
չութիւնը, վորն ապրում է Թարթաուի (Ադրբե-
ջան) ավազանի շրջաններում, տարվա ամենաշոգ
ժամանակ, իբրեւ հարկավոր է քաղհանել, բուկը
լցնել, քոչում է լեռները, թողնելով բամբակն
անտեր: Դրա համար ել զարմանալի վոչինչ չկա,

վոր նրանց ցանքերը: չնայած լերեք անգամ ջրվում են, ավելի քիչ բերք են տալիս, քան մեկ անգամ ջրված ցանքերը: Վորպես որինակ կարող ենք բերել Յեվլախի շրջանում Յ քանի գաղթականներից կազմված և տեղափոխված գյուղը, վորը չունի հարկավոր թվով յեվրոպական ինվենտար, հանքային պարարտանյութ և վաշել ավելորդ ջուր: Այս գյուղացիները հրաշալի բերք են ստանում ցանքերը խնամքով մշակելով, վորը լրացնում է թե ջրի պակասը, թե սերմի վորակը և թե նույնիսկ ուշացած ցանքերը:

Համկոմկուսի կենտրոնական կոմիտեի վորոշումը պարտավորեցնում է մեզ հնդկաստանի վերջին բամբակի շրջաններում բարձրացնել բերքատվությունը 70 տոկոսով: Դրա համար ել առաջարկվում է պետական և կոոպերատիվ կազմակերպություններին բաժնակի շրջաններն ապահովել անհրաժեշտ միջոցներով ու նյութերով: Կուսակցական, խորհրդային և կոոպերատիվ ստորին ապարատներից պահանջվում է ծրագրված և լավ հիմքերի վրա դրված կազմակերպչական աշխատանք սերմ համան կամպանիան անցկացնելու համար:

Անցյալ տարիների փորձառությունը ցույց է տվել, վոր մենք կ'զմակերպչական աշխատանքի գծով ունեցել ենք ճեղքվածքներ: Բամ-

բակը ծլելու և հասնելու համար միջին հաշվով պահանջվում է 96 տոթ որ: Լավ մշակելով, վորոշողելով և ժամանակին ցանելով, ցանքերը հրաշալի բերք են տալիս: Չնայած դրան շատ շրջաններ ցանքն ուշացնում են, վորի հետևաքով բերքատվությունը ցածր է լինում: Միանգամ ընդմիջտ պետք է յուրացնել, վոր մեզ մոտ Անդրուկ վիսուում ցանքերի վեջին ժամկետը մայիսի 10-ն է:

Բերքատվության վրա ազդում են նաև ագրոկոմպլեքսային միջոցները: Որինակ, ձմեռվա վորը մեկ հեկտարին ավելացնում է 40 կիլոգրամ բերք, կանոնավոր պարարտացումը հեկտարին տալիս է 360 կիլոգրամի տարբերություն, շարքացաններն ու լավ մշակված մի հեկտարի բերքատվությունը բարձրացնում են մոտավորապես 200 կիլոգրամ: Այսպիսով ձմեռվա վորը, կանոնավոր պարարտացումն ու շարքացանը հեկտարին տալիս են 37—38 տոթ ավելի հումք:

Միմիայն բոլոր ագրոմիջոցների կիրառումը թույլ կտա մեզ հասնել և նույնիսկ անցնել բերքատվության առաջին աստիճաններից, վորոնք նախատեսված են Համկոմկուսի կենտրոնական կոմիտեի հուլիսյան վորոշմամբ: Դրա համար ել հարկավոր է ադգբուր միջոցները լախ կերպով ժողովրդականացնել ու նրանց նշանակությունը

բացատրել ու հայտնի դարձնել բամբակացան մասսաներին:

Ագրո-կոմպլեքսային ձեռնարկումների հաջող ընթացքի համար անհրաժեշտ են այն բոլոր կազմակերպությունների ընդհանուր միահամուռ ջանքերը, վերինը գյուղատնտեսության և սերմանման կամպանիայի հետ ուղղակի կամ սնուցողակի կիրպով առնչություն ունենա:

Մինչև հիմա այդ բնագավառում տիրում երխառնաշփոթություն, վերի մասին վկայում է ձմեռային արատը: Լավ թե վատ Ազջրտնտեսությունը պատրաստվեց այդ կամպանիան կիրառելու: Այդ հարցով տեղերը բոլորովին չեն զբաղվում և անուշադիր են: Այն պայմաններում, չիրք բամբակի համար ձեռք առած յուրա անշուր միջոց կապված է դոսակարգային կատարի պաշտքի հետ, տեղերը չգեկավարեցին բամբակացաններին ձմեռային արատը և գյուղատնտեսական միջոցները կիրառելու գործում: Անհրաժեշտ է նույնպես ասել, վոր բերքատվության բարձրացման և ագրո-միներմումի կիրարկությանը տեղերում ագրո-պերսոն ալը բավարար չափով մասնակից չի դարձվում:

ՄԵԲՆՆԱՅԱԿՄԵՐ ԲԵՐՔՆԱԿԱՐԾՆԵ ԲԵՐՁՐԱՅՄՆԵ
ՈՐԺԵՂ ԼԺՆԿՆ Ե

Անդրկովկասում բամբակագործությունյան դարգացման ուժեղ արգելքներից մեկը բամբակի

ըջաններում յեվրոպական գյուղատնտեսական գործիքների և ձիու ուժի անբավարար քանակությունն և: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս ըջաններում յեղած գործիքների ու բանավորական անասունների թիվը*:

	Բանաստուն	Գոթան	Աղյուս	Փայլ	Նարբաններ
ԱՍԽՀ					
1 տնտեսությունը . . .	1,30	0,20	0,50	0,15	—
100 հեկտար ցանքին . .	53	6,10	11,30	8	—
ՀՍՍՀ					
1 տնտեսությունը . . .	0,50	0,08	0,50	0,23	—
100 հեկտար ցանքին . .	49	3,70	11,80	12	0,01
ՎՍՍՀ					
1 տնտեսությունը . . .	1,00	0,12	0,70	0,20	—
100 հեկտար ցանքին . .	56	4,70	14,10	11	0,06

Վեյ ջին յերկու տարվա ընթացքում գյուղատնտեսական գործիքների ներմուծումը զգալիորեն ավելացավ, բայց վոչ այն չափով, վոր Անդրկովկասի պահանջները լիովին բավարարին: 1930 թ. նախնական տվյալների համաձայն Անդրկովկասի բամբակագործական ըջաններում յե-

* Տվյալները վերցված են 1927 թ. վիճակագրության նյութերից:

դել և 51.700 գութան, 33,900 փոցի, 975 շար-
քացան, 3.500 կոլտիփատոր և 480 տրակտոր:

Յեթե գյուղատնտեսական գործիքների ան-
բավարար ներմուծումն արդեն մի փաստ է, վո-
րի հետ առաջիմ պետք է հաշտվել, ապա չեղած
գործիքների անբավարար բեռնավորման, անռա-
ջիոնայ ոգտագործման և նույնիսկ չոգտագործ-
ման դեմ պետք է կատարել պայքար միել:

Անդրելերկոմի վարդման առաջին բաժի
լերկորդ կետը նշում է, վոր բամբակի վարի
համար մեքենայական ուժն ոգտագործվել է ան-
թույլատրելիության չափ անբավարար և ան-
շուրք կերպով:

Վոչ մի շրջանում գյուղատնտեսական գոր-
ծիքները լրիվ բեռնավորում են ունեցել: Ընդ-
հանրապես յուրաքանչյուր կամպանի լի ընթաց-
քում տրակտորի արտադրականութունը պետք
է լինի 150—200 հեկտար, բայց շատ անտեսու-
թյուններում և կոլտնտեսութուններում տրակ-
տորի արտադրականութունը սարսափելի չա-
փերով ցածր է: Նույնը նկատվում է շարքացան
և ուրիշ մեքենաների նկատմամբ: Յեթե ա գյու-
նարերության մեջ առանձին մեքենաներն ու
դադգյանները չունեն լրիվ բեռնավորումը, մենք
ահագանդ ենք տալիս, իսկ ընդհանրապես, յերբ
բամբակի շարքացանները 20 հեկտարի փոխա-

րեն մշակում են 4 հեկտար և պակաս, իսկ տր-
ակտորները կամպանիայի ամբողջ ընթացքում
վարում են 20 հեկտար, ալդ յերևույթի հանդեպ
մնում ենք միանգամայն անտարբեր: Մեքենա-
ների պարապալրդի մասին մենք մինչև հիմա
հարց չենք բարձրացրել: պետք է բացարձակա-
պես խոստովա ել, վոր ալդ մեղրը ընկնում է հա-
սարակական, իսկ ավելի շատ կոոպերատիվ կազ-
մակերպութունների վրա: Բամբակի ինվենտա-
րի բաշխման ժամանակ չնդել են աշակերտի փաս-
տեր, վորոնք դո րա են դալիս կուտակցական
խո հրդային գծի սովորական ազավողումների
շրջանակնե ից: Որինակ, շատ տեղերում հատի-
կային ինվենտարը մն ցիլ է րաց յերկնքի, անձ-
րիկ և ձյունի տակ այն ժամանակ, յերբ հա-
րևան շրջանում զգացվել է հենց նույն ինվեն-
տորի սուր պահանջ, և նրա բացակայության հե-
տևանք վ սե մանման կամպանիան վիճել է:
Վնասարտությունը վերջա ներու համար մենք
վճռական քալիեր չենք արել: Սխալ չի լինի, յե-
թե ասենք, վոր գյուղատնտեսական գործիքնե-
րի ոգտագործումը բոլոր շրջաններում չի գըտ-
նվում իր բարձրության վրա: Մեքենաների պա-
րապուրդների դեմ վճռական պայքար ողելու
փոխարեն մենք լսում ենք միմիայն զանազան
դատողութուններ արտասանմանից նոր մեքե-

նաներ ներմուծելու անհրաժեշտության մասին: Իհարկե, ավելի հեշտ է մեքենաների բավարար քանակության բացակայությամբ այս կամ այն գիրեկտիվների իրագործման անհնարինությունն արդարացնել, քան այնպես աշխատել, փոր մեքենաների ոգնությունը առաջ կատարում իրագործենք բամբակի անկախությունը և բամբակացան գյուղացիներին զինենք արդեն լեղած ինվենտարով: Անդրկովկասի համար ծրագրված նոր մեքենաների ուժեղ ներմուծումը մեզ իրավունք չի տալիս ռացիոնալ կերպով 100 տոկոսով չոգտագործելու լեղած ինվենտարը: Միայն և միայն հարցն այնպես պետք է դնել, փորպեսզի գյուղատնտեսական աշխատանքները մեքենայացման յենթարկենք ու մեքենայացման շնորհիվ հասնենք ամենաբարձր բերքատվության:

Խոսելով ինվենտարի մասին, չի կարելի աչքաթող անել նաև մեքենաների պահեստի մասերի հարցը: Այստեղ էլ գործն սնհաջող է ընթանում: Պահեստի մասերի անժամանակ մատակարարո մն ու բաշխումը, ֆիրմաների ու տեսակների տարբերությունը, — այդ բոլորը մեքենաների իզուր պարապուրդ է առաջադնում: Դյուղատնտեսություն մե ենայացման բնաշավառում այդ զեֆեկաները պահանջում են մի շարք հարցեր լուծել. առաջին հերթին Անդրդյուղատնտես-

տի կարգավորող դերն ուժեղացնել, գյուղատնտեսական գործիչների և նրանց մասերի շրջանային պահեստներ կազմակերպել: Դրա հետ միասին անհրաժեշտ է մեքենատրտկոտրային ցանցն ընդարձակել և հրաժարվել մեքենաները մանր խմբերի բաժանելուց: Շնորհիվ Անդրկովկասում կազմակերպված 4-րդ Մ. Տ. կ. գործունեյությունը անցյալ տարի բամբակի ցանքերը լերկու շարաթով շուտ վերջացան, քան նախորդ տարիներում:

Այժմ, լերք գյուղատնտեսություն վերականգնման շրջանն ավարտված է և մենք թևակոխել ենք ռեկոնստրուկցիայի և գյուղատնտեսությունը սոցիալիստական ռելսերի փոխանցելու շրջանը, գյուղատնտեսություն մեքենայացման հարցերն ավելի ախտուալ բնույթ են ստանում և պահանջում են կուսակցական, խորհրդային և կոոպերատիվ բոլոր ապարատներից բուռն կենտրոնացված ուշադրություն:

ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՊԵՍՈՂ ՄԵՌՈՒՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՄԵՍԻՆ

Բամբակագործության զարգացմանը նպաստող առաջնակարգ պայմաններից մեկն էլ բամբակացաններին տրդյունաբերական և պարենափորման ապրանքներ մատակարարելն է: Մատակարարման այս տարրիկում էլ ապահովական

մանակներում չպետք է կարգավորել կոոպերացիայի բաշխման ցանցի աշխատանքը, առաջ քաշելով դասակարգային տոկոսն աշխատավարձեր, և սպառողական ու բամբակագործական կոոպերացիաների աշխատանքները միմյանց հետ շաղկապել: Բամբակագործության զարգացման մյուս ձեռնարկումներից խոշոր նշանակություն ունի բնակչության վերաբնակեցումը և նոր ջրովի հողերի անտեսական ոգտագործումը: Անցյալ տարի Ուզբեկստանից Ադժաբեդի շրջանը գաղթեցին 500 անտեսություն: Առաջիկա սերմանման կամպանիայի ժամանակ Հյուսիսային Կովկասից, Ուկրաինայից և Միջին Ասիայից Սալանի և Մուղանի շրջանները պետք է գաղթեցվեն դարձյալ 3.500 ընտանիք:

Մեծ ծավալով գաղթին առայժմ արգելք է հանդիսանում մալարիայի համաճարակը, վոր գոյություն ունի Սալանի, Գյուկչայի, Ղարաբաղի, Ուշարի և մյուս շրջաններում:

Զրաբաշխական մի շարք սիստեմների անբարեկարգ վիճակն ու ստորերկրյա ջրերի առատությունը ճանձացնում են այդ շրջանների հողը, առաջացնելով մալարիա, վորն ուժեղ կերպով անդրադառնում է տեղական բնակչության արտադրողականության վրա: Մալարիայի դեմ պայքարելու համար անհրաժեշտ են նախազգու-

շական ձեռնարկումներ, և պետք է հուսալ, վոր Անդրկովկասի կառավարությունը այդ հարցը զրական կերպով կլուծի:

ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻՆԵՆ ՅԵՂ. ԲԱՄԲԱԿ ԷՆԿԱՄԵՆԻ ՅԵՐԲԵԳ, ՏԱՐԻՆ

Բամբակագործական կոոպերացիայի աշխատանքը ևս բամբակի գարնանացանի, կանտրակտացիայի և բերքի ուտիլիզացիայի ապագրիզում ունեցել է դարձյալ մի շարք խոշոր սխալներ, վորոնց հետևանքը լինեաց գնման կամպանիայի ամփոփումներից: Մինչև 1928 թ. ցանքեր կատարելու և բերքի ուտիլիզացիայի ամբողջ աշխատանքը կատարել են պետական բամբակի կազմակերպությունները, այսինքն բամբակագործ գործարանների վարչությունները և վարկային ընկերությունները: Իսկ 1928 թ. սկսած վերոհիշյալ ֆունկցիաներն անցել են բամբակագործական կոոպերացիային, վորի անփորձություն, անպատրաստականություն, բյուրոկրատիզմի, դանդաղ-կոտություն և ինքնահոսի պատճառով իր առաջադրված խնդիրները նա թույլ կերպով լուծեց:

Բամբակագործական կոոպերացիայի՝ գյուղում կատարած պրակտիկ աշխատանքի մեջ դեֆեկտներ են լեղել վոչ միայն կազմակերպչական բնութի, այլև ազավագվել և կուսակցու-

Թյան քաղաքականության գիծը: Որինակ, կու-
 լակների տնտեսությունները և յենթարկվել
 կոնտրակտացիայի, չքավորներին և միջակե-
 հատկացված վարկերը տրվել են դարձյալ կո-
 լակներին: Բամբակադործական կոոպերացիա-
 ստորին ապարատում ազատության ելին գտնում
 դասակարգային թշնամիները, վիժեցնելով կո-
 ոպերացիայի առանց այն ել թույլ աշխատանքը:
 Ստորին աշխատանքների անվորակ կազմը, նրանց
 կտրվածությունը մասսաներից, արհամարհան-
 դեպի աշխատանքը չքավորների ու բատրակնե-
 րի մեջ, վորոնք գյուղում խորհրդային իշխանու-
 թյան հավատարիմ նեցուկը լինելին, տեղական
 կազմակերպությունների հետ ունեցած փոխա-
 բարեբուծյունների անկանսնությունը, նախա-
 ձեռնություն բացակայությունը և նույնիսկ իր
 գործունեություն շրջանը չիմանալը, — ահա այս
 բոլորի հետևանքն ահա լեղավ, վոր առաջադրանք-
 ները վիժեցին, և կոնտրակտացիայի պայմանա-
 գրերի չարամիտ խախտողները մնացին վոչ մի-
 ահա անպատիժ, այլ հաճախ խորամանկութեամբ
 վայելեցին կոոպերացիայի պաշտպանությունը:
 Յեղել են դեպքեր, յերբ կոնտրակտացիայի պայ-
 մանագրեր են կնքվել այնպիսի «ցանքարարնե-
 րի» հետ, վորոնք բամբակադործության և ընդ-
 հանրապես գյուղատնտեսության հետ վոչ մի

գուշ չեն ունեցել, որինակ, սափրիչների հետ:
 Այդ պատճառով ել տարեցտարի պակասում ելին
 քերքերը: Աղբբեջանում անցյալ տարի չի ցան-
 դա պլանային ամբողջ տարածության 30,3 տո-
 կը, իսկ Հայաստանում՝ 18,3 տոկոսը:

Անդրկովկասի բոլոր ցանքարարներից հում-
 քը հանձնելու շնորհայացան 20.000 մարդ, մի-
 լիաֆն վերևից գործադրված ուժեղ ճնշման տակ
 կոոպերատիվի ստորին աշխատավորները կազ-
 մեցին չարամիտ ցանքարարների ու հումքը պա-
 կաս հանձնողների ցուցակները:

Կուտակցական, խորհրդային-տնտեսական,
 կոոպերատիվ, կոլխոզային և կոմբինատ կազմա-
 կերպությունները պետք է բալլշևիկորեն ձեռնա-
 մուխ լինեն զարնանացանի կոնտրակտացիայի
 աշխատանքներին, գորհավաքի յենթարկեն ու-
 ժերը և ժամանակին կատարեն առաջադրված
 խնդիրները:

ՀՀ Ազգային գրադարան



NL0210386

32.013

ԳԻՆԸ 7 ԿՈՊ. (11/4 մանգոլ)



О КОНТРАКТАЦИИ ЯРОВЫХ
ПОСЕВОВ 1931 ГОДА

Госиздат ССР Армении
Эривань 1931